

ԳԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

*Թեմա՝ Ուսումնական շարժառիթի ձևավորումը կրտսեր դպրոցականների
մոտ*

Հետազոտող ուսուցիչ՝ Հովակիմյան Անուշ

Վերապատրաստող՝ Ա. Ստեփանյան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ 2023

Բովանդակություն

Ներածություն	3-4
Գլուխ 1. Ուսումնական գործունեության շարժառիթը	
1.1 Ուսումնական շարժառիթի հիմնախնդիրները հոգեբանամանկավարժական հետազոտություններում.....	5-7
1.2 Ուսումնական շարժառիթի ուսումնասիրման հիմնական մեթոդները.....	7-10
Գլուխ 2. Ուսումնական շարժառիթի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ	
2.1 Ուսումնական շարժառիթը կրտսեր դպրոցական տարիքում.....	10-13
2.2 Ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները.....	13-18
Եզրակացություն	18-19
Գրականության ցանկ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը և ուսումնասիրվող հիմնախնդիրը

Ուսումնական շարժառիթի ձևավորումը երկար տարիներ շարունակ հանդիսանում է գիտնականների, հոգեբանների և մանկավարժների ուսումնասիրման առարկա /Բոժովիչ Լ.Ի., Գալպերին Պ.Յ., Լեոնտև Ա.Ն., Մարկովա Ա.Կ., Էլկոնին Դ.Բ., Վիգոտսկի Լ.Ս. և այլն/: Ժամանակակից դպրոցի համար այս հիմնախնդիրը այժմ ևս մնում է արդիական և տվյալ խնդրի վերաբերյալ այս հեղինակների հետազոտությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս այն դիտել տարբեր տեսանկյուններից: Երեխաների ճնշող մեծամասնությունը առաջին դասարան է գալիս ուսուցման նկատմամբ դրական վերաբերմունքով: Բայց անցնում է որոշ ժամանակ և երեխաների մի մասի մոտ ընկնում է հետաքրքրությունը դպրոցի նկատմամբ: Ինչո՞ւ է դա տեղի ունենում: Ինչպե՞ս դարձնել ուսումնական գործընթացը գրավիչ ուսուցման ողջ ժամանակահատվածում: Այս հարցերը վաղ թե ուշ կանգնում են յուրաքանչյուր ուսուցչի առջև, անկախ նրանից, թե սովորողների որ տարիքային խմբի հետ նա գործ ունի:

Չայտնի հոգեբան Ա. Լեոնտևի բնութագրմամբ՝ «Առանց շարժառիթի գործունեություն չի լինում»: Շարժառիթն ընդհանրապես ցանկացած մարդու գործունեության աղբյուրն է: Եթե չկան ներքին մղումներ և շարժիչ ուժ, ապա ցանկացած գործ դատապարտված է դառնալու ձանձրալի ու տաղտկալի սովորույթի:

Անվիճելի է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին: Չարգացումը դառնում է մանկավարժ կան գործընթացի գլխավոր բառը, որպես «սովորել» հասկացության այլընտրանք: Ցանկացած ուսումնական ծրագիր դատապարտված է անհաջողության, եթե այն կիրառելիս ուսուցիչը չի օգտագործում այնպիսի միջոցներ, որոնք կխթանեն աշակերտի մեջ ուսման հանդեպ հետաքրքրության առաջացման պրոցեսը: Հետաքրքրությունը, որպես շարժառիթ, չափազանց մեծ դեր է կատարում ուսուցման մեջ: Այն ձևավորվում է ուսուցման պրոցեսում

և միաժամանակ յուրաքանչյուր ուսուցչի համար ամենագործուն միջոցներից մեկն է՝ գիտելիքների որակը բարձրացնելու և դպրոցականների մեջ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք դաստիարակելու հարցում: Այս պարագայում շարժառիթի ձևավորման խնդիրը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, քանի որ շարժառիթը ուսուցման մեջ երեխայի հաջողության կամ ձախողման կարևորագույն պայմաններից մեկն է: *Այսպիսով, հետազոտության արդիականությունը կայանում է կրտսեր դպրոցականների մոտ ուսումնական շարժառիթի ձևավորման ուսումնասիրման անհրաժեշտության մեջ:*

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ուսումնական շարժառիթի ձևավորման առանձնահատկությունները կրտսեր դպրոցականների մոտ: Հետազոտության խնդիրներն են՝

- տեսական մոտեցումների վերլուծության միջոցով ցույց տալ ուսումնական շարժառիթի ձևավորման դպրոցականների մոտ: առանձնահատկությունները կրտսեր տարիքի
- որոշել կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթի ձևավորման առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը՝ կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթը:

Հետազոտության առարկան՝ կրտսեր դպրոցականների ուսումնական շարժառիթի ձևավորման գործընթացը:

Հետազոտության մեթոդները՝ գիտական գրականության տեսական վերլուծություն:

Գլուխ 1. Ուսումնական գործունեության շարժառիթը

1.1 Ուսումնական շարժառիթի հիմնախնդիրը հոգեբանամանկավարժական հետազոտություններում

Ուսումնական գործունեությունը ներառում է կառուցվածքային և գործառական տարաբնույթ բաղադրիչներ, որոնցից միայն շարժառիթային բաղադրիչն է որոշակիորեն ցույց տալիս ուսումնաճանաչողական գործունեություն իրականացնող սուբյեկտի վերաբերմունքն իր գործունեության հանդեպ, ինչպես նաև հարաբերությունն աշխարհին, մարդկանց, կյանքի ամենատարբեր հարցերին:

Լ.Ի. Բոժովիչը նշում է. «Ուսուցման խնդիրն է՝ այնպես անել, որ դպրոցում ձեռք բերված գիտելիքները վերածվեն երեխայի համար ներքին անհրաժեշտության՝ ամբողջությամբ կապված լինելով նրա անձի հետ, և սովորեցնել նրան՝ դպրոցական գիտելիքների համակարգի հետևում տեսնել իսկական իրականությունը»: Սակայն կրթական համակարգում ոչ միշտ և ոչ բոլոր սովորողների դեպքում է հաջողվում ստեղծել ուսուցման գործընթացի և գիտելիքների հանդեպ նման վերաբերմունք: Միշտ չէ, որ դպրոցը վերաբերվում է դրան որպես հատուկ խնդրի¹: Ա.Ն. Լեոնտևը առանձնացնում է շարժառիթի «իմաստակազմավորիչ» գործառույթը և ընդգծում է նրա կենտրոնական նշանակությունը սուբյեկտի մոտիվացիոն ոլորտում: Այլ կերպ՝ շատ բան կախված է տվյալ սովորողի՝ ուսումնական գործունեության իմաստի ըմբռնումից, քանի որ դրանով են բացատրվում շարժառիթի դրդող և ուղղորդող գործառույթները: Սովորելու շարժառիթի կայունությունը, հուզականությունը, ինտենսիվությունը, արտահայտվածությունը և տևողությունն առաջին հերթին պայմանավորված են շարժառիթի «իմաստակազմավորիչ» գործառույթի ձևավորվածությամբ²:

Մասնագիտական գրականության մեջ ցույց է տրվում, որ ուսումնական առաջադրանքի հաջող կատարման և դրա համար դրական գնահատականի արժանանալու դեպքում սովորելու նպատակն ամրակայվում և աստիճանաբար խորանում է: Առաջադրանքի կատարումն աշակերտի համար ձեռք է բերում նոր իմաստ, նշանակում է՝ երևան են գալիս սովորելու նոր մոտիվներ: Ա.Ն. Լեոնտևի ձևակերպմամբ՝ «Տեղի է

¹ Божович, 1984, с. 85.

² Леонтьев, 1975, с.101.

ուևնուևմ շարժառիթի տեղաշարժը դեպի նպատակը»³: Այստեղ խոսքը գնում է հասկանալով սովորելու անհրաժեշտության մասին, որի համար հավանաբար պետք է համոզիչ պատասխաններ գտնել երեխայի հետևյալ հարցերին.

ա) Ինչո՞ւ է պետք տվյալ գիտելիքն իմ ուսումնական գործունեության մեջ:

բ) Ի՞նչ է այն տալիս ինձ:

գ) Ինչո՞ւ է պետք յուրացնել տվյալ գիտելիքն ընդհանրապես:

Տվյալ հարցադրումների առաջադրմամբ՝ սովորողների մեջ կարելի է ձևավորել նոր շարժառիթներ և նպատակներ⁴:

Թեև մոտիվացիոն ոլորտի բոլոր կողմերը փոխադարձաբար կապված են միմյանց հետ, և բոլորն էլ հանդես են գալիս մի ամբողջության մեջ, սակայն մեզ համար առանձնապես ուշագրավ է իմացական շարժառիթների ուսումնասիրումը: Հոգեբանական ուսումնասիրություններում իմացական ոլորտի շարժառիթների համակարգն ուղղված է ուսումնական գործունեության տարբեր կողմերին: Դրանց մեջ նկատառվում են.

ա/ արդեն ձեռք բերված գիտելիքների հենքով նոր գիտելիքների ստացումը,

բ/ տիրապետումը գործողության նոր եղանակներին,

գ/ ուսումնական աշխատանքի հետագա կատարելագործումը⁵:

Ի վերջո, ուսումնասիրվող օբյեկտի ձևափոխման եղանակների յուրացումն է հանգեցնում ուսումնական գործունեության սուբյեկտի հարստացմանը⁶: Դա էլ ենթադրում է իմացական այնպիսի շարժառիթի ձևավորման անհրաժեշտություն, ինչը կողմնորոշում է սովորողին և նրան մղում գործողության եղանակի տիրապետմանը: Սովորելու կայուն, դրական շարժառիթի ձևավորման հիմնախնդրի ուսումնասիրման համար մանկավարժական հոգեբանության մեջ առանձնացվում են երկու մոտեցումներ.

ա/ Ուսումնասիրվում են սովորելու գործընթացի, նրա բնույթի և արդյունավետության վրա ազդող տարբեր մոտիվները, բ/ Բացահայտվում են շարժառիթի ոլորտի ձևավորման վրա ազդող ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության և կառուցվածքային 6 տարրերի գործառույթները⁷:

Երկու փոխկապակցված ասպեկտները դիտարկվում են ուսուցման մի ամբողջական գործունեության մեջ:

³ Леонтьев, 1975, с.125.

⁴ Маркова et.al ., 1983, с.42.

⁵ Էլկոնին, 1975:

⁶ Божович, 1984, с. 104.

⁷ Ներսիսյան, 2002:

Հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել մի շարք պայմաններ, որոնք բարենպաստ հիմք են ստեղծում ուսումնական շարժառիթի ձևավորման համար: Դա գիտական հասկացությունների յուրացումն է, դրանց ծագման պայմանների բացահայտումը, յուրահատուկ ուսումնական գործունեության ձևավորումը /Գալպերին Պ.Յ., Դավիդով Վ.Վ., Մարկովա Ա.Կ., Էլկոնին Դ.Բ./, հայտնիի և անհայտի միջև հակասությունների ստեղծումը /Մորոզովա Ն.Գ./, աշակերտի դիրքը միջանձնային հարաբերությունների համակարգում /Կիրիչուկ Ե.Ի., Մորզուն Վ.Ֆ./, խմբային գործունեության կազմակերպումը /Մատիս Տ.Ա., Չլոչևսկի Ս.Ե. և այլն/, խրախուսման և պատժի համակարգի կիրառում /Անանև Բ.Գ., Լինգարդ Ի. և այլն/, գիտելիքների կարևորության ցուցադրումը /Դոբրինին Ն.Ֆ./ և այլն: Բոլոր այս պայմանները, որոնք առաջ ենք քաշվել տարբեր հեղինակների կողմից, շատ կարևոր են, հատկապես, երբ դրանք կիրառվում են միասին: Այս պայմաններից յուրաքանչյուրը նախատեսված է մեծամասամբ շարժառիթների որոշակի խմբի ձևավորման համար. կամ լայն սոցիալական, կամ ուսումնաճանաչողական:

1.2 Ուսումնական շարժառիթի ուսումնասիրման հիմնական մեթոդները

Ոչ փորձարարական մեթոդներ /Դիտարկում/

Դիտարկումը ուսումնական շարժառիթի ուսումնասիրման ամենահաճախակի կիրառվող մեթոդն է: Դիտարկման նպատակը կոնկրետացվում է նաև ուսուցչի արձանագրած ուսումնական շարժառիթի ցուցանիշներով: Այդպիսի ցուցանիշներ կարող են հանդիսանալ, օրինակ, դասերի ժամանակ սովորողների ակտիվության տարբեր դրսևորումները. ուսումնական գործունեության առանձնահատկությունները, ուսուցչին 7 տրվող հարցերի բնույթը, սովորողի պատասխանների բնույթը, սովորողի վերաբերմունքը բարձր կամ ցածր գնահատականներին և այլն: Երբեմն, որպես ուսումնական շարժառիթի ցուցանիշ, կիրառվում են տարբեր հուզական ռեակցիաներ /պատասխանելիս խոսքի արտահայտչականությունը, առոգանությունը և այլն/, ինչպես նաև սովորողի դիմախաղի և ժեստիկուլյացիայի առանձնահատկությունները⁸: Դիտարկումը որպես ուսումնական շարժառիթի ուսումնասիրման մեթոդ՝ կիրառվում է ոչ միայն դասերի, այլ նաև՝ արտադասարանական աշխատանքների ժամանակ: Դիտարկման արդյունքները արձանագրվում են կամ ձայնագրվում:

⁸ Սարգսյան, 2001:

Չարցում

Չարցումը, ինչպես և դիտարկումը, ուսումնական շարժառիթի ուսումնասիրման ամենատարածված մեթոդներից է: Սովորաբար կիրառում են 3 տիպի հարցաթերթեր. 1. Չարցաթերթեր, որոնք կազմված են ուղիղ հարցերից և ուղղված են բացահայտելու սովորողների շարժառիթները և գիտակցված դրդապատճառները /շարժառիթներ նպատակները⁹:

2. Ընտրողական ձևի հարցաթերթեր, որոնք կազմված են մի քանի պատրաստի պատասխաններից, որոնցից սովորողը ընտրում է առավել ճիշտ կամ իրեն համապատասխան պատասխանը:

3. Սանդղակներով հարցաթերթեր, որոնց հարցերին սովորողը ոչ թե պետք է պատասխանի՝ գտնելով ճիշտ տարբերակը, այլ պետք է միավորներով գնահատի յուրաքանչյուր առաջադրված հարցի ճշգրտությունը /հարցաթերթի այս ձևը նպատակահարմար չէ կիրառել կրտսեր դպրոցում, քանի որ այն սովորողից պահանջում է բավարար հասուն և ադեկվատ ինքնագնահատական/:

Չրույց

Չրույցը հիմնականում կիրառում են ուսումնական շարժառիթի անհատական առանձնահատկություններն առավել խորն ուսումնասիրելու համար: Չրույցը բարեհաջող անցկացնելու համար կարևոր է հետևել մի շարք պայմանների: Այսպես, ուսուցչի և սովորողի միջև պետք է հաստատել հոգեբանական կոնտակտ, նրանց հարաբերությունները զրույցի ժամանակ պետք է լինեն դրական, բարեհամբույր: Չրույցի ժամանակ սովորողին պետք չէ առաջադրել ուղիղ հարցեր /օրինակ՝ «Դու սիրում ես մաթեմատիկան», ուսուցիչը պետք է այդպիսի հարցերին փոխարինողներ գտնի /«Կա կարծիք, որ դպրոցական ծրագիրը ծանրաբեռնված է մաթեմատիկական առարկաներով: Ի՞նչ ես դու մտածում այդ ուղղությամբ»/¹⁰:

Սովորողների գործունեության արդյունքների ուսումնասիրում

Այստեղ, որպես ուսումնասիրման օբյեկտ, հանդիսանում են սովորողների ստեղծագործությունների ամենաբազմազան արդյունքները՝ բանաստեղծությունները, նկարները, տարբեր կրկնօրինակները, ամենօրյա օրագրային ձայնագրությունները, դպրոցական շարադրությունները և այլն: Այս մեթոդի միջոցով ուսուցիչը վերլուծում է

⁹ Ներսիսյան, 2002:

¹⁰ Սուրադյան, 2002, էջ 12:

ուսումնական շարժառիթների ինչպես ներքին /բովանդակային/, այնպես էլ արտաքին /ֆորմա/ առանձնահատկությունները:

Դպրոցական առաջադիմության ուսումնասիրում

Ոչ բոլոր դեպքերում է առաջադիմությունը արտաքին ցուցանիշ այն բովանդակության, այն շարժառիթների և պահանջմունքների հանդեպ, որոնք դրդում են աշակերտներին սովորել և գիտելիքները կիրառել: Օրինակ՝ սովորողն իրեն շատ հետաքրքրող առարկայից կարող է ունենալ ցածր առաջադիմություն՝ ուսուցչի հետ կոնֆլիկտ ունենալու պատճառով, և հակառակը, իրեն «չհետաքրքրող» առարկայից նա կարող է ունենալ բարձր առաջադիմություն, քանի որ նրա հաջողությունները այդ բնագավառում վերահսկվում են ծնողների կողմից: Դպրոցական առաջադիմության ուսումնասիրման ժամանականակներում է հաշվի առնել սովորողի սուբյեկտիվ վերաբերմունքը գնահատականին: Ինչպես ցույց են տվել հոգեբանական հետազոտությունները, այդ վերաբերմունքը զգալիորեն կարող է փոխվել՝ կապված ուսումնական շարժառիթի փոփոխման հետ:

Փորձարարական մեթոդներ

Բնական գիտափորձ

Պայմանները, որոնք կիրառվում են բնական գիտափորձ անցկացնելիս, հատուկ ձևով չեն կազմակերպվում ուսուցչի կողմից, նրանք բնական ձևով ընդգրկված են ուսումնադաստիարակչական գործընթացում: Ուսուցիչը տվյալ դեպքում կիրառում է դասավանդման տարբեր պայմանների համադրում և ոչ փորձարարական մեթոդիկա ների միջոցով ամրագրում է սովորողների շարժառիթների փոփոխություններն ու այլ առանձնահատկությունները¹¹:

Լաբորատոր գիտափորձ

Ի տարբերություն բնական գիտափորձի՝ լաբորատորը ենթադրում է արհեստա կան /սովորողների համար անսովոր/ առաջադրանքների ու դրանց կատարման համար համապատասխան պայմանների բավականին կազմակերպված համակարգ: Այս գիտափորձի ավելի կոնկրետ օրինակ է «ծրարներով մեթոդիկան», որը կիրառվում է սովորողների ճանաչողական հետաքրքրությունների բովանդակությունն ու զարգաց ման մակարդակը բացահայտելու նպատակով¹²: Ուսուցիչը յուրաքանչյուր ուսումնական առարկայից կազմում է 4 տիպի 3-4-ական առաջադրանքներ: 1-ին տիպի առաջադրանքը

¹¹ Էլկոնին, 1975:

¹² Маркова et.al ., 1983, с.44.

պահանջում է գտնել պատճառահետևանքային կապերը, 2-րդը՝ ավելի վաղ ուսումնասիրած կյուբի պարզ վերարտադրում, 3-րդը՝ ձեռք բերած գիտելիքների գործնական կիրառում, իսկ 4-րդը՝ ստեղծագործական, ոչ ստանդարտ մոտեցում որոշմանը: Առաջադրանքներով փաթեթը դրվում է ծրարի մեջ՝ համապատասխան առարկայի անվանվամբ: Սովորողներին առաջարկվում է ըստ ցանկության վերցնել ցանկացած ծրար, իսկ ծրարից՝ ցանկացած հարց: Առաջադրանքը կատարելուց հետո նրանց առաջարկվում է վերցնել ցանկացած մեկ ուրիշ ծրար: Ուսուցիչը հետևում է, թե սովորողը ինչպես է ընտրում ծրարը /պատահական, թե՛ նպատակաուղղված/, ինչ տիպի ծրար է ընտրել /նախընտելի ուսումնական առարկան/, ինչ բովանդակության են նախընտրած հարցերը /տեսական, գործնական, ստեղծագործական/, ինչպիսին է առաջադրանքների կատարման բնույթը /ստերիոտիպային է, թե ստեղծագործական/ և այլն:

Գլուխ 2. Ուսումնական շարժառիթի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ

2.1 Ուսումնական շարժառիթը կրտսեր դպրոցական տարիքում

Նախադպրոցական տարիքից սկսած՝ անձի զարգացումը՝ կապված շարժառիթների ստորադասության և ինքնագիտակցության կայացման հետ, շարունակվում է կրտսեր դպրոցական տարիքում: Բայց կրտսեր դպրոցականը գտնվում է այլ պայմաններում. նա ներառված է հասարակայնորեն նշանակալից ուսումնական գործունեության մեջ, որի արդյունքները բարձր կամ ցածր գնահատվում են մոտ մեծահասակների կողմից: Դպրոցական առաջադիմությունից, գնահատականներից՝ ինչպես լավ, այնպես էլ վատ, անմիջականորեն կախված է այս փուլում անձի զարգացումը:

Ի՞նչն է շարժում երեխային, ինչպիսի՞ ցանկություններ նա ունի: Իր դպրոցական կյանքի սկզբում, ունենալով դպրոցականի ներքին դիրք՝ նա ցանկանում է սովորել: Ընդ որում սովորել լավ, գերազանց: Ուսման բազմազան սոցիալական դրդապատճառների կողքին գլխավոր տեղը զբաղեցնում է բարձր գնահատականներ ստանալու շարժառիթը: Բարձր գնահատականները փոքրիկ աշակերտի համար այլ խրախուսումների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության հիմքը, հպարտության առարկան: Երբ երեխան հաջողությամբ սովորում է, նրան գովում է և ուսուցիչը, և ծնողները, նրան որպես օրինակ են բերում այլ երեխաների: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի կարծիքը ոչ միայն որոշիչ է, այլև միակ

հեղինակավոր կարծիքն է, բարձր գնահատականները և մնացած գնահատականներն ապահովում են համապատասխան կարգավիճակ:

Ուսման այլ՝ լայն սոցիալական դրդապատճառները՝ պարտք, պատասխանատվություն, կրթության ստանալու անհրաժեշտությունը և այլն, նույնպես գիտակցվում են աշակերտների կողմից՝ յուրահատուկ իմաստ հաղորդելով նրա ուսումնական կյանքին: Չնայած, այս դրդապատճառները դեռ պասիվ են, ի տարբերություն բարձր գնահատական կամ գովասանք ստանալու դրդապատճառից, որն իրապես գործող դրդապատճառ է. վերջինիս իրացման համար աշակերտը պատրաստ է անմիջապես սովորել դասերը, կատարել բոլոր առաջադրանքները¹³: Այնուամենայնիվ, ուսման սոցիալական դրդապատճառները կարևոր են դպրոցականի անձնային զարգացման համար:

Ոչ այնքան լավ սովորող աշակերտների շարժառիթը յուրահատուկ է այն տարբերվում է առաջադիմությամբ բարձր աշակերտների շարժառիթից: Որոշ սոցիալական դրդապատճառներ նրանց մոտ ի հայտ են գալիս երրորդ դասարանից: Լայն սոցիալական դրդապատճառները համապատասխանում են այն արժեքային կողմնորոշիչներին, որոնք երեխաները վերցնում են մեծերից՝ գլխավորապես ընտանիքում:

Բավական հետաքրքիր են նաև ճանաչողական հետաքրքրությունների տարբերությունները: Տարրական դասարաններում ինչ-որ առարկա խորությամբ ուսումնասիրելու հետաքրքրությունը հազվադեպ է հանդիպում, սովորաբար այն համադրվում է հատուկ ընդունակությունների վաղ զարգացման հետ: Այսպիսի երեխաները, որոնց համրում են օժտված, շատ քիչ են: Կրտսեր դպրոցականների 10 մեծամասնությանը բնորոշ են ոչ այդքան բարձր մակարդակի ճանաչողական հետաքրքրություններ:

Ճանաչողական շարժառիթի կարևորագույն ասպեկտը ուսումնա-ճանաչողական շարժառիթներն են, ինքնակատարելագործման շարժառիթները: Եթե երեխան ուսուցման գործընթացում սկսում է ուրախանալ նրան, որ ինչ-որ բան է իմացել, սովորել, նշանակում է նրա մոտ զարգացել է ուսումնական գործունեության կառուցվածքին ադեկվատ շարժառիթ¹⁴: Դժբախտաբար, լավ սովորող աշակերտների շրջանում շատ քիչ են ուսումնա-ճանաչողական շարժառիթներ ունեցող աշակերտները:

¹³ Մուրադյան, 2002, էջ 11:

¹⁴ Մուրադյան, 2002:

Առաջադիմության աչքի չընկնող շատ աշակերտներ ինտելեկտուալ առումով պասիվ են: Նրանք հետաքրքրություն են դրսևորում շատ հաճախ առավել հեշտ, ոչ հիմնական առարկաների, երբեմն նույնիսկ մեկ առարկայի, օրինակ ֆիզկուլտուրային կամ երգի դասերին: Անընդհատ ցածր գնահատականների հետ կապված բարդ, դժվար հասկանալի առարկաները, հազվադեպ են առաջացնում ճանաչողական շարժառիթ: Այսպիսի աշակերտները կողմնորոշվում են առանձին, մասնավոր գործողությունների կատարմանը և ամբողջ տարրական դպրոցի ընթացքում պահպանում են հակվածությունը՝ հեշտ առարկայի և ուսուցչի ցուցումներին հետևելու, նրա գործողությունները ընդօրինակելու¹⁵: Հասնելու շարժառիթը տարրական դասարաններում դառնում է գերակայող: Բարձր առաջադիմությամբ երեխաների մոտ վառ արտահայտված է հաջողության հասնելու շարժառիթը. ցանկություն՝ լավ, ճիշտ կատարելու առաջադրանքը, անհրաժեշտ արդյունքը ստանալու: Եվ չնայած այն սովորաբար համադրվում է բարձր գնահատական ստանալու դրդապատճառի հետ, այնուամենայնիվ կողմնորոշում է երեխային ուսումնական գործողությունների արդյունքայնության ու որակի վրա՝ անկախ այդ արտաքին գնահատականի՝ դրանով իսկ նպաստելով ինքնակարգավորման ձևավորմանը: Հաջողության հասնելու շարժառիթը ճանաչողական հետաքրքրությունների հետ, առավել արժեքավոր դրդապատճառ է, այն պետք է տարբերակել հեղինակային շարժառիթից¹⁶:

Հեղինակային շարժառիթը պակաս տարածված է, քան հասնելու շարժառիթը, բնորոշ լիդերի հակումներ ու չափազանց բարձր ինքնագնահատական ունեցող երեխաներին: Այն դրդում է աշակերտին առավել լավ սովորել համադասարանցիներից, առանձնապես նրանցից, լինել առաջինը: Ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ հեղինակային շարժառիթը չի զարգանում: Հաջողության հասնելու շարժառիթը, ինչպես նաև բարձր գնահատական ստանալու շարժառիթը բնորոշ են դպրոցական ուսուցման սկզբնական շրջանին: Բայց այս ժամանակ էլ հաջողության հասնելու դրդապատճառին զուգահեռ դրսևորվում է անհաջողությունից խուսափելու շարժառիթը: Այս մոտիվացիոն միտումը զարգանում է ամբողջ տարրական ուսուցման ընթացքում, ինչի հետևանքով ցածր առաջադիմությամբ աշակերտները հաճախ զրկվում են հաջողության հասնելու և բարձր գնահատական ստանալու դրդապատճառներից, իսկ անհաջողությունից խուսափելու շարժառիթը ձեռք է բերում նշանակալից ուժ: Այն ուղեկցվում է տագնապայնությամբ,

¹⁵ Маркова et.al ., 1983.

¹⁶ Մկրտչյան, 1979, էջ 36:

գնահատման իրավիճակներում վախով՝ ուսումնական գործունեության հաղորդելով բացասական հուզական երանգավորում: Այս նույն ժամանակ ցածր առաջադիմությամբ աշակերտ ների մոտ առաջանում է փոխհատուցող /կոմպենսատոր/ շարժառիթ: Սրանք ուսումնական գործունեության նկատմամբ երկրորդային դրդապատճառներ են, որոնք թույլ են տալիս հաստատվել այլ ոլորտներում՝ սպորտի, երաժշտության, նկարչության և այլն: Երբ ինքնահաստատվելու պահանջմունքը բավարարվում է գործունեության որոշակի ոլորտում, ցածր առաջադիմությունը չի դառնում աշակերտի տագնապային ապրումների աղբյուր¹⁷:

Այսպիսով, շարժառիթը բարդ կառուցվածքային գոյացություն է, որում տարբեր շարժառիթներ հանդես են գալիս միասնության և փոխկապակցվածության մեջ: Այդ իսկ պատճառով շարժառիթի ձևավորումը չի կարող ընթանալ մասերով /սկզբում կձևավորենք գիտելիքների կարևորության հասկացումը, այնուհետև պարտքի և պատասխանատվության, և այլն/: Միայն ամբողջական մոտեցումը կարող է ապահովել շարժառիթի ձևավորման հաջողությունը: Նպատակը հենց այն շղթան է, որի միջոցով հնարավոր է կառավարել ուսումնական շարժառիթի ձևավորման գործընթացը և ապահովել տվյալ մոտեցումը:

2.2 Ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները

Դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի առջև դրված հիմնական խնդիրների մեջ չկա առավել կարևոր և միաժամանակ առավել բարդ խնդիր, քան սովորողների մոտ ուսումնական գործունեության նկատմամբ դրական և կայուն շարժառիթի ձևավորման խնդիրը, քանի որ, ակնհայտ է, որ առանց այդպիսի շարժառիթի սովորողի գործունեությունը ուսումնական գործընթացում կլինի անարդյունավետ: Որո՞նք են ուսումնական գործունեության նկատմամբ դրական շարժառիթի ձևավորման ուղիներն ու մեթոդները: Դիտարկենք դրանցից հիմնականները:

- ուսումնական նյութի բովանդակությունը,
- ուսումնական գործունեության մակարդակն ու բնույթը,
- ուսուցչի հարաբերությունը սովորողների հետ¹⁸:

Ուսումնական նյութի բովանդակության դերը ուսումնական շարժառիթի ձևավորման մեջ

¹⁷ Էլկոնին, 1975, էջ 49:

¹⁸ Гальперин et. al., 1963, с.64.

Կարևոր է հասկանալ, որ յուրաքանչյուր դասի, թեմայի բովանդակությունը կարող է հիմնավորվել կամ շարժառիթ հանդիսանալ միայն հետևյալ պայմանների կատարման դեպքում.

- հաշվի առնել սովորողների պահանջմունքների բնույթը,
- լինել հասանելի, բայց ոչ պարզ ու հեշտ,
- հենվել նախկին գիտելիքների վրա, տալ նոր տեղեկատվություն,
- ուղղված լինել շրջապատող աշխարհի երևույթների և օբյեկտների ճանաչման խնդրի հաղթահարմանը /պրոբլեմային ուսուցում/ և այդ ճանաչման մեթոդների տիրապետմանը¹⁹:

Ուսումնական գործունեության մակարդակն ու բնույթը

Ուսումնական նյութի բովանդակությունը յուրացվում է սովորողների կողմից ուսումնական գործունեության ընթացքում: Ուսումնական գործունեության վերաբերյալ հոգեբանական հետազոտությունները ցույց են տվել, որպեսզի սովորողների մոտ մշակվի ճիշտ վերաբերմունք ուսումնական գործունեության նկատմամբ, նրան ընդգրկող շարժառիթը պետք է կառուցել հատուկ ձևով²⁰: Ուսումնական գործունեության շարժառիթային փուլում սովորողները գիտակցում են, թե ինչո՞ւ և ինչի՞ համար է նրանց պետք ուսումնասիրել ծրագրի այս բաժինը, կոնկրետ ինչ պետք է իրականացնեն, որպեսզի հաջողությամբ լուծեն հիմնական ուսումնական խնդիրը: Այս փուլը սովորաբար բաղկացած է լինում մի քանի ուսումնական գործողություններից: Դասի ժամանակ ուսուցիչը պատմում է, ցույց է տալիս սովորողներին, սակայն այդ ողջ ինֆորմացիան որոշ երեխաների համար կարևոր չէ. նրանք ունենդրում են, սակայն չեն լսում են, նայում են, բայց չեն տեսնում, նրանք զբաղված են լրիվ այլ գործունեությամբ՝ երագում են, մտածում են «իրենցի» մասին: Որպեսզի այս երեխաները ընդգրկվեն ուսումնական գործունեության մեջ, պետք է ստեղծել խթան մտածական գործընթացի համար: Այդպիսի հնարներ են հանդիսանում՝

1. Պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, որը երեխաներին ընկղմում է ծրագրի սպասվող թեմայի ուսումնասիրման մեջ: Այն կարող է ստեղծվել տարբեր միջոցներով.

ա) երեխաների առջև դնելով խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն տվյալ թեմայի ուսումնասիրության դեպքում,

բ) ծրագրի ուսումնասիրվող թեմայի տեսական և գործնական կարևորության շուրջ ուսուցչի և սովորողների զրույցի /պատմության/ միջոցով,

¹⁹ Սարգսյան, 2001, էջ 28:

²⁰ Маркова et.al ., 1983, с.51.

գ) ուսուցչի պատմության միջոցով, այն մասին, թե ինչպես է լուծվել խնդիրը գիտության պատմության մեջ,

դ) գործնական աշխատանքի իրականացմամբ, որը ավարտվում է խնդրահարույց հարցի առաջադրմամբ²¹:

2. Հիմնական ուսումնական խնդրի ձևակերպում, այսինքն պրոբլեմային իրավիճակի քննարկման արդյունքի մատնանշում: Ինչպես գրում է Լ.Ս. Վիգոտսկին. «Չի կարող առաջանալ ոչ մի գործունեություն՝ առանց նպատակի և խնդիրների առկայության, որոնք ընթացք և ուղղություն են տալիս այդ գործունեությանը»²²: Դրա համար ուսումնական գործունեության կազմակերպման կարևոր պայման է հանդիսանում սովորողներին ուսումնական խնդիրների ինքնուրույն ձևակերպման և ընդունման բերելը:

3. Թեմայի ուսումնասիրման նպատակով իրականացվող գործունեության հնարավորությունների ինքնակառավարում և ինքնազնադատում: Նրանից հետո, երբ ուսուցման հիմնական խնդիրը պարզ է դառնում սովորողների համար, նշվում և քննարկվում է իրականացվելիք աշխատանքի պլանը: Ցանկալի չէ ասել. «Այսօր մենք կանցնենք նոր թեմայի ուսումնասիրությանը...» և միանգամից անցնել նոր նյութի ուսուցմանը: Անհրաժեշտ է հաղորդել թեմայի ուսումնասիրման համար նախատեսված ժամանակը, ինչպես նաև, ինչ պետք է իմանալ և կարողանալ դրա ուսումնասիրման համար: Դրանով իսկ սովորողների մոտ ստեղծվում է նյութի ուսումնասիրմանը նախապատրաստվելու անհրաժեշտության դիրքորոշում:

Ուսումնական շարժառիթի ձևավորման նպատակով ստեղծագործական առաջադրանքների համակարգի օգտագործումը ենթադրում է հետևյալ չափանիշների առկայություն²³:

²¹ Մկրտչյան, 1979, էջ 32:

²² Гальперин et. al., 1963, с.66

²³ Гальперин et. al., 1963, с.68.

h/h	Մակարդակ	Ուսումնական շարժառիթի ձևավորման հնարներ
1.	Ցածր	Չկան հատուկ հետաքրքրություն զարգացնելու առաջադրանքներ և տեղեկատվություն՝ ուսման նկատմամբ համար
2.	Ծայրահեղ	Ուսուցիչը բացատրում է առաջադրանքի կատարման անհրաժեշտությունը
3.	Բավարար	Գրավիչ իրավիճակների ստեղծում, գլոխկոտրուկների, խաչբառերի, առակների, հետաքրքրաշարժ փաստերի օգնությամբ
4.	Լավ	Չեղբայրի բովանդակությամբ ստեղծագործական առաջադրանքի օգտագործում
5.	Բարձր	Չեղբայրի բովանդակությամբ ստեղծագործական առաջադրանքների համակարգի օգտագործում
6.	Առավելագույն	Չեղագոտական խնդրի որոնում և լուծման կազմակերպում

Ուսուցչի հարաբերությունը սովորողների հետ

Շարժառիթի ձևավորման ևս մեկ ուղի ընկած է ուսուցչի և աշակերտների հարաբերություններում: Ուսուցչի գործունեության հիմնական ուղղվածությունը տվյալ դեպքում կայանում է ուսուցման պրոցեսում հուզական հարմարավետ մթնոլորտի ստեղծման, խմբում բարեհամբույր հարաբերությունների ապահովման, սովորողների նկատմամբ մանկավարժական լավատեսության դրսևորման մեջ, որը կայանում է նրա մեջ, որ ուսուցիչը հույս է ներշնչում սովորողներին և հավատում է նրանց կարողություններին²⁴: Խիստ կարևոր է սովորողների հետ հարաբերությունների որակը: Այդ առումով հարկավոր է նկատառել՝

1. անձի զարգացումը, թերությունների ցուցադրումը, սովորողների նկատմամբ վստահության դրսևորումը,
2. ուսուցչի անձնական վերաբերմունքի դրսևորումը աշակերտի նկատմամբ, սեփական կարծիքի արտահայտման ձևը,
3. խմբում ընկերական հարաբերությունների կազմակերպումը /փոխստուգում, փոխօգնություն, կարծիքների փոխանակում/:

Դրական շարժառիթի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի աշակերտի գիտելիքների գնահատումը: Կարևոր է, որպեսզի սովորողի աշխատանքի գնահատման մեջ գլխավորը լինի այդ աշխատանքի որակական վերլուծությունը. ուսումնական նյութի յուրացման բոլոր դրական պահերի, առաջընթացների ընդգծումը և թերությունների

²⁴ Սարգսյան, 2001, էջ 27:

պատճառների դուրսբերումը: Միավորային գնահատումը պետք է զբաղեցնի ուսուցչի գնահատման գործընթացում երկրորդական տեղ²⁵: Դա հատկապես կարևոր է հիշել, ժամանակ ուսուցողական գնահատման ժամանակ:

Շատ մանկավարժներ առաջարկում են /որոշ տեղեր նաև կիրառում/ հոգեկան խթանման մի հիանալի միջոց՝ խաղը: Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիարակության գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման համակարգում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն: Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիք ներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները²⁶:

Չարգացնող ուսուցման հիմնական խնդիրներից մեկը դպրոցականների մեջ ակտիվ, ինքնուրույն, ստեղծագործական մտածողության ձևավորումն է: Ստեղծագործական մտածողության զարգացման համար անհրաժեշտ է աշակերտներին հաճախակի դնել այնպիսի պրոբլեմային իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի հետազոտական մոտեցում: Հարկավոր է այնպես կազմակերպել պարապմունքները, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն պրոբլեմային հարցեր, այլև դրանք ինքնուրույնաբար լուծելու ձգտում: Ստեղծագործական մտածողությունը հետազոտական պրոցեսի հիմնական բաղադրամասն է, երբ աշակերտն ինքն է բացահայտում, ինքն է գտնում պրոբլեմի լուծման մինչ այդ իրեն անհայտ ուղին: Բազմաթիվ դիտարկումները ցույց են տալիս, որ երեխայի ստեղծագործական դրսևորումները մեծ չափով կախված են ոչ միայն շրջապատի իմացական մակարդակից /ընտանիք, համադասարանցիներ, մանկավարժներ, ստեղծագործական խմբակներ և այլն/, այլև նրա ստեղծագործական ընդունակությունների հանդեպ շրջապատի ցուցաբերած գնահատականից:

²⁵ Էլկոնին, 1975, էջ 51:

²⁶ Սարգսյան, 2001:

Իր գործունեության մեջ տարրական դասարանների ուսուցիչը պետք է ոչ միայն հաշվի առնի ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները, այլև ակտիվորեն կիրառի սովորողների խթանման զանազան մեթոդներ և հնարներ: Պայմանականորեն դրանք կարելի է բաժանել 4 խմբերի.

- **Յուզական** /հաջողության, խրախուսման և պարսավման իրավիճակի ստեղծում, վառ ակնառու պատկերավոր պատկերացումների ստեղծում, խթանող գնահատում/,
- **Ճանաչողական** /հիմնվել կյանքի փորձի վրա, առաջադրանքների ազատ ընտրություն, այլընտրանքային լուծումների փնտրում, տրամաբանական խնդիրների առաջադրում, պրոբլեմային իրավիճակների ստեղծում/,
- **Կամային** /ճանաչողական դժվարություններ, ուսումնական պահանջների առաջադրում, ուսուցման արդյունքների մասին ինֆորմացում, վարքի ռեֆլեքսիա/,
- **Սոցիալական** /փոխօգնության, համագործակցային իրավիճակների ստեղծում, փոխստուգում/²⁷:

Եզրակացություն

Այսպիսով, հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը թույլ տվեց առանձնացնել մի շարք պայմաններ, որոնք բարենպաստ հիմք են ստեղծում ուսումնական շարժառիթի ձևավորման համար: Դա գիտական հասկացությունների յուրացումն է, դրանց ծագման պայմանների բացահայտումը, յուրահատուկ ուսումնական գործունեության ձևավորումը /Գալպերին Պ.Յ., Դավիդով Վ.Վ., Մարկովա Ա.Կ., Էլկոնին Դ.Բ./, հայտնիի և անհայտի միջև հակասությունների ստեղծումը /Մորոզովա Ն.Գ./, աշակերտի դիրքը միջանձնային հարաբերությունների համակարգում /Կիրիչուկ Ե.Ի., Մորզուն Վ.Ֆ./, խմբային գործունեության կազմակերպումը /Մատիս Տ.Ա., Չլոչևսկի Ս.Ե. և այլն/, խրախուսման և պատժի համակարգի կիրառում /Անանև Բ.Գ., Լինգարդ Ի. և այլն/, գիտելիքների կարևորության ցուցադրումը /Դոբրինին Ն.Ֆ./ և այլն: Բոլոր այս պայմանները, որոնք առաջ ենք քաշվել տարբեր հեղինակների կողմից, շատ կարևոր են, հատկապես, երբ դրանք կիրառվում են միասին: Այս պայմաններից յուրաքանչյուրը նախատեսված է մեծամասամբ շարժառիթների որոշակի խմբի ձևավորման համար. կամ լայն սոցիալական, կամ ուսումնա-ճանաչողական: Այսպիսով, մենք գալիս ենք հետևյալ եզրակացության.

²⁷ Ներսիսյան, 2002, էջ15:

- Հոգեբանամանկավարժական հետազոտությունների տվյալները վկայում են այն մասին, որ կրտսեր դպրոցական տարիքը ունի ուսուցման շարժառիթի ձևավորման մեծ հնարավորություն /ռեզերվ/: Կրտսեր դպրոցական տարիքը շարժառիթային ուսուցման սկիզբն է, որից մեծապես կախված է նրա հետագա ճակատագիրը դպրոցական տարիքի ողջ ընթացքում:
- Ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները մի քանիսն են, և, դրա կայացման համար անհրաժեշտ է կիրառել ոչ թե մեկ, այլ բոլոր ուղիները որոշակի համակարգով, քանի որ դրանցից ոչ մեկը, ինքն իրենով, առանց մյուսների, չի կարող խաղալ որոշիչ դեր բոլոր սովորողների ուսումնական շարժառիթի ձևավորման մեջ: Այն ինչ մեկ սովորողի համար հանդիսանում է որոշիչ, մյուսի համար այդպիսին կարող է չլինել: Միասնության մեջ բոլոր նշված ուղիները բավական արդյունավետ միջոց են դպրոցականների մոտ ուսումնական շարժառիթի ձևավորման համար:
- Սովորողների մոտ ուսումնական շարժառիթի ձևավորման ուղիները պետք է լինեն դպրոցի մանկավարժական կոլեկտիվի և ընտանիքի ուշադրության կենտրոնում:

Գրականության ցանկ

1. Էլկոնին Դ. (1975), «Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն», Երևան, Լույս:
- 3.Մկրտչյան Մ. (1979), Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների մասին, Երևան, Լույս:
4. Մուրադյան Ռ. (2002), Դպրոցականների ուսումնական գործունեության շարժառիթը, Երևան, Գիտելիք 1, էջ 8-14:
5. Ներսիսյան Ս. (2002), Անձի ստեղծագործական դրսևորումները որպես հոգեբանա մանկավարժական խնդիր, Գիտելիք 1, էջ15-16:
6. Սարգսյան Վ. (2001), Խաղը և ուսուցումը, Գիտելիք 1, էջ 27-29:
7. Божович Л.И., (1984), Психологический анализ формализма в усвоение школьных знаний. Советская педагогика, № 11, М.,169 с.
8. Гальпирин П.Я., Запорежец А.В., Эльконин Д.Б., (1963), Проблема формирования знаний и умений у школьников. «Вопросы психологии», №5, 61 - 72с.
9. Леонтьев А.Н., (1975), Деятельность. Сознание. Личность. М.: 304с.
10. Маркова А.К., Орлов А.Б., Фридман Л.М., (1983) Мотивация учения и ее воспитание у школьников, М., 64с.